

Որ զծաղր առակեաց ի մեզ, զիա՞րդ լուսցէ.
այր արդար եւ ցածուն էր նա
 Ի դարն շուայլեալ եւ անաւրինեալ.
յաղթեաց հազարաց դստերացն Կայենի.
15 եւ ափով գինի յաղթեաց նմա.
եղեւ ընդ երկար ընդ դստերան Կայենի
 Եւ բնակեաց զամ մի ընդ անասունս:
Եւ նա որ յաղթեաց ի ներքս եւ արտաքս՝
 պարտեցաւ ի գինւոյ.
20 փոխեցան յանէծս ամենայն աւրհնութիւնք իւր.
 զի անէծ զորդի իւր.
եւ ոչ կամեցաւ, եւ արար զնա
 ծառայ ծառայից ստուգութեանն.
անէծ բերան նորա զորդին կրտսեր զոր սիրէր նա զՔամ,
25 եւ զՔանան մանուկ, որ վշտացոյց զնա ի մերկումն իւր:
Նայեաց եւ ի Սահակ. ո՞րչափ վշտացաւ ի ժամու
 զի աւրհնեաց զորդի իւր.
եւ իրբեւ Յակոբո՞ւ էին աւրհնութիւնքն,
 վշտիւ արգել զնոսա յեսաւայ.
30 յանիծանելն Նոյի զՔանան ի սուգ մեծ էին միտք նորա.
զի ոչ եթէ ցամամբ անիծանէր, այլ ստուգութեամբ հատանէր:
Ոչ եթէ յուժգին գինւոյ մերկացաւ ստոյգն եւ արդարն,
զի եթէ արբեալ էր յայպան, զնորա զհետ երթայր պատուհան.
ստուգութիւնն ոչ ա՛ւ ահն երեսաց Քանանու.
35 զիա՞րդ առնէր զնոյ գատաւոր մեղացն զոր ինքն արար:
Եթէ գինւոյն յաղթեալ էր նմա, մի հրաման ելանէր
 ի վերայ այնր որ մերկացան եւ այնր որ ոչն ծածկեաց.
անէծ նովաւ զթշնամանիչն, եւ աւրհնեաց նովաւ զպատուիչն իւր.
աղբիւր որոշմանց արար զնա, շարութեանց եւ բարութեանց:
40 Ի ժամու աւրհնութեան հանգուցեալ էր,
 եւ արամեալ ի ժամ անիծից.
եւ ինքն Քամ վշտարար նմա, զի տարազիր եղեւ յաւրհնութեանցն.
զինի առակեաց զցածութիւն ծանուն,
 զի արբ գինի եւ յաղթահարեաց զմիտս ծերոյն:
45 Եւ եթէ նա զի աւրհնութեամբ արբ գինի սակաւ եւ չափով,
եւ զարձան յանէծս աւրհնութիւնք իւր,
 եւ խոստացաւ ազատաց ծառայութիւն,

զձանր Է (Պետրոսեան) կ'ուզի զծաղր: — 12 D այր ցածուն եւ արդար: — 25 ED Իսահակ:
E չունի զի: — 29 ED Յակովբոս... զնոսայ (D զնոսա է) Սառայ. ուղղեցի զնոսա յեսաւայ:
— 46 ED զարձաւ:

քանի՞ եւս երկիցէ տկարութիւն մեր ի գինւոյ,
50 զի դուցէ մեղիցէ մեզ.
Ի բժշկութիւն եւեթ արբցուք, զի յայս իսկ տուեալ է գինի:
Որ ցաւեցան ըստ նմանութեան Տիմոթէի՝
 այնպիսեացն ետ զնա Առաքեալ,
 բժշկել նովաւ զցաւս իւրեանց.
55 որ ըմպէ զնա վասն ցաւոց,
 գոհասցի զբարւոյն որ ետ զնա մեզ.
եւ առողջ որ վարի նովաւ, գոհութեամբ եւ չափով արբցէ:
Աւրհնութիւն Որդւոյ որ արար զնա միսիթար ամենայն
 արամեցելոց.
60 եւ գոհութիւն նմա, զի արար զնա մեզ զարմանիչ ցաւոց մերոց:

Հրտ. 2. Ն. ԱԿԻՆԵԱՆ

**ՄՈՎՍԷՍ ԳԸՍԽՈՒՐԸՆՅԻ (ԿՈԶՈՒՐԸԾ
ԳԸՂԱՆԿԱՏՈՒՐԸՆՅԻ) ԵՒ ԻՐ ՊԸՏ-
ՄՈՒԹԻՒՆՆ ԸՂՈՒՐԸՆՅԻ**

(Շարունակութիւն):

10. ՋՈՒԱՆՇԻՐ, ՎԱՐԱԶ-ՏՐԻԱՏ, ՏԵՐ ԻՍՐԱՅԷԼ.
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ազուանից Պատմութեան մէջ ընդարձակ
գլուխներ նուիրուած են Ջուանէր եւ վա-
րագ-Տրդատ իշխաններու եւ Իսրայէլ եպիս-
կոպոսի: Այս գլուխները մէկ գրչի ար-
տագրութիւններն են: Անոնք բովանդակու-
թեամբ պատմական եւ սրբախօսական վի-
պասանութեան փորձեր են, նկարագրով՝
ճարտասանական կրթութիւններ:

Անանուն հեղինակը ունեցած է իր գրա-
դարանին մէջ Փաւստոսն, Կորիւնը, Ագա-
թանգեղոսը, Ղ. Փարպեցին, Եղիշէն, Սե-
թանգեղոսը, Մ. Խորենացին, Թումաս Արծրունին
րիոսը, Մ. Խորենացին, Թումաս Արծրունին (930) եւ
Յովհաննէս Դրասխանակերտցին (930) եւ
այլ ժամանակագրական եւ վկայարանա-
պի ժամանակագրական գրութիւններ: Այս
կան-հայրապետական գրութիւններն ոչ միայն
գրուածքներէն ծաղկաքաղած է ոչ միայն
պատմական տեղեկութիւններ, այլ եւ բա-
ռեր եւ ճարտասանական ստուգութիւններ:
Ի բերան ուսած կ'երեւայ Կորիւնն եւ Ագա-
թանգեղոսը: Չարմանալի չէ այնուհետեւ,
թանգեղոսը: Չարմանալի չէ այնուհետեւ,

եթէ հեղինակիս «ծաղկաքաղ վարդապե-
տութիւնն եւ քաղցրուտոյց խրատները»,
«ախորժարար» լսելի եղած են ունկնդիրնե-
րուն (Բ. 41):

Վիպագիրը հայրենասէր ազուան մըն է,
ոչ ազատ կուսակցական ձգտումներէ եւ ազ-
գամոյթիւնէ: Ան նկրտած է ստեղծելու ի
պարձ անս իր ժողովուրդին պանծալի հերոս-
ներ, քաջարի սպարապետներ, խոհեմագարդ
ներ, քաջարի սպարապետներ, զէմքեր,
քաղաքապետներ, ամենապայծառ զէմքեր,
աստուածատէս առաքելներ: Ան կը բուսցնէ
աստուածատէս առաքելներ: Ան կը բուսցնէ
հայրենի հողէն կենսատու թառեր, սրբոց
մատուցներ, բարեգարգելու Ազուանից վան-
քերը, ուխտատեղիի վերածելու Ազուանից
աշխարհը: Աշխարհ մը, ուր հիմնուած է
հիւսիսային կողմանց նախկեղեցին, առա-
քելական աջով, ուր զարգացած է անկախ
նուիրապետութիւն, որ ընդարձակած է իր
աստուածները մինչեւ Հոնաց աշխարհը թա-
սանցանց. աշխարհ մը, որ եւ քաջութեամբ
եւ փառօք, եւ նուիրապետական իշխանու-
թեամբ եւ սրբութիւններու ստատութեամբ
ի վեր է քան Հայոց աշխարհն եւ Եկեղեցին:
Ան պրկած է իր գրչի ազգը նպատակակէտ
ընտրած երկինքի ստողերը:

Թէ Ազուանից Պատմութեան Ա. 27—30,
Բ. 29—33 եւ Բ. 17—28, 29—31 եւ 33—45
մէկ գրչի գործ են, ուշագիւր եղած էր ար-
դէն Ն. Ազունց (Անահիտ, 10, Թ. 3, էջ 77):

54 E չունի որ: — 59 D չունի մեզ:

